ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի օգոստոսի 12-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 12-ը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Լիաննա Հարությունյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ.

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված իրավական ակտերի, ռազմավարական ծրագրերի և միջոցառումների մշակում և համապատասխան կարգով շրջանառում.

- Մասնավորապես մշակել և շրջանառել եմ 2022 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի փետրվարի 22-ի N 33-Ա/1 հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 140-Ա/1 հրամանը:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում իրականացրել եմ անձի ֆունկցիոնալության գնահատում, կատարել տունայցեր, մասնակցել ՖՄԴ մոդելի վերաբերյալ տարաբնույթ քննարկումների:
3. Կազմակերպել եմ ՖՄԴ մարզային տեղեկատվական հանդիպումներ, կազմել ժամանակացույցը, համապատասխան գրություններ ուղարկել մարզպետարանների մարզային պատասխանատուներին, մասնակցել մարզային տեղեկատվական քննարկումներին:
4. Մասնակցել եմ անձի ֆունկցիոնալության գնահատման առցանց և անցանց քննարկումներին և դասընթացներին:
5. Իրականացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ ՀԿ-ների կողմից ներկայացված («Լիարժեք կյանք», «Մանկական զարգացման հիմնադրամ», «Աստաղավարդ», «Աուտիզմ ազգային հիմնադրամ», «Ջերմիկ

անկյուն հիմնադրամ») հաշվետվությունների ընդունման, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:

6. Պատասխանել եմ քաղաքացիների դիմում-բողոքներին: Ներկայացված դիմումները և բողոքները մանրամասն ուսումնասիրվել են, տրամադրվել են համապատասխան պարզաբանումներ անձնական օգնականի ծառայության, խնամակալության, հաշմանդամություն ունեցող անձանց արտոնությունների, իրավունքների և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: (ընթացիկ)
7. Իրականացրել եմ կառավարությունից, ազգային ժողովից և այլ գերատեսչություններից ու կազմակերպություններից ստացված գրությունների ուսումնասիրման և պատասխան գրությունների պատրաստման և ներքին գրավոր հանձնարարականների կատարման վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրման գրավոր տեղեկատվությունների տրամադրման աշխատանքներ:
8. Մասնակցում եմ բաժնի ընթացիկ աշխատանքներին, քննարկումներին և հանդիպումներին: Միաժամանակ՝ ելնելով բաժնի աշխատանքներից կազմակերպում եմ տարբեր կազմակերպությունների, ՀԿ-ների, հիմնադրամների և ստորաբաժանումների հետ հանդիպումներ:
9. Մասնակցում եմ տարբեր շահագրգիռ կազմակերպությունների կողմից կազմակերպված հանդիպումների և միջոցառումների՝ ապահովելով կատարվող գործողությունների ընթացքը և ներկայացնելով բաժնի դիրքորոշումները քննարկվող հարցերի վերաբերյալ:

Փորձագետ՝ Լիաննա Հարությունյան

14.11.2022թ.

Փորձագետի կողմից կատարված աշխատանքները գնահատում եմ գերազանց: